

ՌՈՒՍԱՅ ՊԱՏՐԻԱՐԷՐ ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

Երուսաղեմ (Տեղեկատու Դիւան).- Հիմզաբքի, 28 Մարտի երեկոյեան ժամը 6.30ին, Ամեմայն Ռուսաց Պատրիարք Ալեքսէյ Բ. ը պաշտօնական այցելութիւն տուաւ Հայոց Պատրիարք Ամեմ. Տ. Թորգոմ Արքեպս. Մամուկեանին:

Ռուսաց Պատրիարքի առաջին այցելութիւնն էր Ս. Երկիր: Իր այս այցը պատմական, քաղաքական եւ կրօնական բնոյթ ունէր, մամաւամդ մերկայ ժամանակին, երբ Ս. Երկիրը քաղաքական անկայում եւ ամորոշ վիճակի մը մէջ կը գտնուի:

Ռուսաց Պատրիարքը կը յաջորդէ Երջանկայիշատակ Պիմէմ Պատրիարքին որ մօտ տարի մը առաջ Մոսկուայի մէջ իր մահկանացուն կմքեց:

Հայոց Պատրիարքութեան այցելութեան ընթացքին, Նորին Ամեմապատուութեան կ'ընկերակցէր Տիմոթէոս Սրբազանը՝ որ Նորին Ամեմապատուութիւն Յունաց Տիոտորոս Ա. Պատրիարքի մերկայացուցիչն է, ինչպէս մաեւ Յունաց եւ Ռուսաց Եկեղեցիներու թարգմանը եւ քարտուղարը եկեղեցական պատասխանատու գործերու:

Պատրիարքութեան շքերթը Վանքի դուռ կը հասներ եւ պաշտօնական եւ համդիսաւոր կերպով կը դիմաւորուէր Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ խուռներամ բազմութեան կողմէ: Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան կ'առաջնորդեն Ամեմայն Ռուսաց Պատրիարքը դէպի Ս. Յակոբի Գաւիթը ուր Ամեմ. Տ. Թորգոմ Պատրիարքը կ'ընդունի եւ կ'ողջագուրուի Ամեմայն Ռուսաց հոգեւոր Պետին հետ:

Ս. Յակոբեանց Մայր Տաճարը լեցուած էր հարիւրաւոր հաւատացեալներով: Ներկայ էր մաեւ Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը:

Մայր Տաճարին մէջ Հայաստանի Ռադիոյի եւ Հեռուստացոյցի 40 անձերէ բաղկացած երգչախումբը դիմաւորեց Ռուսաց հոգեւոր Պետին, երգելով Հայկական եկեղեցական մեղեդիներ, ինչպէս մաեւ Ռուսերէնով երգ մը: Ներկայ հաւատացեալ ժողովուրդը ապրեցաւ խորհրդաւոր երեկոյ մը Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն մերս:

Ս. Գլխադրի մատուռին եւ Մայր Տաճարի Աւագ խորանին առջեւ կարն աղօթքէ ետք Ամեմ. Տ. Թորգոմ Պատրիարքը եւ Ռուսաց Եկեղեցւոյ Հոգեւոր Պետը առաջնորդուեցան Պատրիարքարանի դահլիճը հիւրասիրութեան համար:

Ամեմ. Սրբազան Պատրիարք Հայրը իր հակիրճ ճառին մէջ ըսաւ որ « Զերդ Ամեմապատուութեան այցելութիւնը կարելոր է Ս. Երկրի բոլոր Քրիստոնեայ համայնքներուն համար »:

« Այս երկիրը Սրբավայր մըն է Քրիստոնեաներու, Հրեաներու եւ Մահմէտականներու համար, բայց մեզի Քրիստոնեաներուս համար այս երկրի մէջ ապրիլը օրինութիւն եւ մեծ ուրախութիւն մըն է: Ս. Երկրի մէջ է որ Յիսուս Քրիստոսը ծնած, ապրած, քարոզած, մեռած եւ Յարութիւն առած է »:

« Մեր Միաբանութիւնը Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ եւ Լատին Կաթօլիկ Եկեղեցւոյ հետ միասին, իրաւատէրն է Սրբատեղեաց եւ պատասխանատու՝ անոնց պահպանութեան գործերուն: Դժբախտաբար, Քրիստոնեաներու թիւը Ս. Երկրին մէջ հետզհետէ կը մուսաւի: Ամ-



Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Ամեն. Պատրիարք Ալեքսէյ Բ.
Երուսաղէմ իր այցելութեան առթիւ



Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Ամեն. Պատրիարք Ալեքսէյ Բ.
այցելութիւն Երուսաղէմի Հայոց Սրբոց Յակօբեանց Մայր Տաճարին եւ
Պատրիարքարան 28 Մարտ 1991



Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մամուկեան կը դիմաւորէ
Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Պատրիարք Ալեքսէյ Բ., Երուսաղէմի
Ս. Յարութեան Տաճարին մէջ, ի ներկայութեան Յոյն Ուղղափառ
Եկեղեցւոյ Պատրիարք Տիոտորոս Ա-ի. 27 Մարտ 1991

հրաժեշտ է որ քաջալերեմք Ս. Երկիր ուխտագնացութիւնը աշխարհի զամազամ երկրամասերէն: Քրիստոնեաներու մերկայութեամբ, Ս. Երկրի կրօնական կեանքը աւելի աշխոյժ կը դառնայ:

« Ձեր մերկայութիւնը այս օրերուն յոյժ կարեւոր է: Մենք դժուար օրեր է որ կ'ապրինք եւ զամազամ դժուարութիւններու առջեւ կը գտնուինք: Բայց մենք պիտի յաղթահարենք այդ բոլորը, այնպէս ինչպէս ամօքեալիմ, քանի որ Հայ եւ Յոյմ Ուղղափառ Եկեղեցիները միշտ հաստատակամ մնացած են իրենց հաւատքիմ եւ իրաւունքներում: Մենք այսօր ուրախ ենք որ Յունաց Պատրիարք Տիոտորոսը հաստատակամօրէն մուիրուած է պահպանելու համար Քրիստոնէիք իրաւունքները Ս. Երկրի մէջ:

Ամենապատիւ Սրբազամ Հայրը մէջբերում ըրաւ ման վերջերս իր Հայաստան կատարած այցելութեան: Ամ հակիրճ կերպով ամդրադարձաւ Հայաստանի եւ Սովետական Միութեան մէջ կրօնական զարթոնքի եւ ազատութեան մասիմ: Հարկաւոր է որ Սովետական Միութեան մէջ ուղիղ Քրիստոնէական ուսում տրուի: Ամհրաժեշտ է որ երիտասարդ հոգեւորականներ Քրիստոսի Վարդապետութիւնը քարոզեն ժողովուրդիմ, որ այնքան ալ դիւրին պարտականութիւն մը չէ: Մեր հոգեւորականներէմ իւրաքանչիւրը երեք հոգիի գործ կը տեսնէ: Ամոնք իրենց գործը կը կատարեն ուրախութեամբ, ծառայելով Քրիստոնէութեան Սուրբ դաւամարքիմ:

« Մենք յոյսով ենք որ մօտ ապագայիմ հաւատացեալ ուխտաւորներ Ս. Երկիր պիտի այցելեն ոչ միայն Ռուսաստանէմ այլ աշխարհի չորս կողմերէմ: Ձեր այստեղի այցելութիւնը ուրեմն հոգեւոր օրհնութիւն մը պիտի ըլլայ բոլոր Քրիստոնեաներու համար », Սրբազամ Հայրը ըսաւ:

Ռուսաց Պատրիարք՝ Ալեքսի Բ. իր հերթիմ շնորհակալութիւն յայտնեց Հայոց Պատրիարքութեան եւ համայնքի կողմէ ցուցաբերուած ջերմ ըմդումներեան համար:

« Մենք խորապէս զգացուած ենք Ձեր ջերմ խօսքերում եւ զգացումներում համար », Հոգեւոր պետը ըսաւ:

Նան ըսաւ որ Սովետական Միութեան մէջ Քրիստոնէութիւնը զամազամ դժուարութեանց առջեւ գտնուած է, բայց մերկայիս մոր զարթոնքի շրջան մըմ է որ կ'ապրի:

Յիշեց որ ամհաւատներ եւս դարձի կու գամ Սովետական Միութեան բոլոր համրապետութիւններում մէջ: Քրիստոնէութիւնը մեծ դեր պիտի խաղայ միջազգայիմ կարեւոր հարցեր լուծելու համար:

Ռուսաց Պատրիարքի այցելութիւնը կը զուգահիշէր Ուղղափառ Եկեղեցիներու Ս. Զատկուայ տօնակատարութիւններում: Այդ առիթով հոգեւոր Պետը ըսաւ.

« Մենք կ'աղօթենք Քրիստոնէական Եկեղեցւոյ եւ Ս. Երկրի ժողովուրդի բարգաւաճման համար: Կ'աղօթենք եւս որ խաղաղութիւն տիրէ Ս. Երկրիմ մէջ եւ այս երկրի բնակիչները սիրով ապրին միմեանց հետ:

Պատրիարքը ըսաւ ման որ Ռուսաց Եկեղեցիմ միշտ լաւ յարաբերութեաններու մէջ եղած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հետ, յամձիմ իր հոգեւոր պետիմ՝ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէմ Ա. Կաթողիկոսիմ:

Իր խօսքը աւարտելէ ետք, Ռուսաց Պատրիարքը ոսկեթել հաւկիթ մը մուիրեց Ամեն. Տ. Մորգով Ս. Պատրիարքիմ : (Ռուս Եկեղեցիմ կ'ըմդումի հաւկիթը որպէս կեանքի խորհրդամիշտ:)

Ամեն. Տ. Մորգով Պատրիարքը ալ իր հերթիմ քոյր Եկեղեցւոյ հոգեւոր պետիմ « Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Գամները » գիրքէմ մուիրեց, ինչպէս ման սատափէ Վերջիմ Ըմթրիքի քանդակ մը: